Արա Ժիրայրի Կետիկյան

Ծնվել է 1969թ. սեպտեմբերի 9-ին, Երևանում:

1986թ. ավարտել է Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 միջնակարգ դպրոցը:

1987-1989թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1991-1996թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1990թ. «Նիկոլ Դուման» կամավորական ջոկատի կազմում մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանությանը: Պարգևատրվել է ՀՀ «Մարտական ծառայություն», ԼՂՀ «Մարտական ծառայություն» կառավարական մեդալներով, ինչպես նաև ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան», «Մարշալ Բաղրամյան», «ՀՀ ԶՈՒ-20-ամյակ», ԵԿՄ «Սպարապետ Վազգեն Սարգսյան», «Հայաստանի երկրապահ», «5-րդ բրիգադ», «5-րդ բրիգադ-20 ամյակ», «ԵԿՄ 20-ամյակ» և այլ մեդալներով ու հուշամեդալներով: Ունի պահեստազորի մայորի զինվորական կոչում:

1994թ.-ից աշխատում է ԵԿՄ վարչությունում: 1999թ. ընտրվել է, 2002, 2004, 2006, 2010, 2012 թվականներին՝ վերընտրվել է ԵԿՄ վարչության փոխնախագահ:

1999-2003թթ.՝ ՀՀ ԱԺ պատգամավոր:

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: